ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **24.01.2020թ. ժամը 12:30**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը,

գնահատողներ՝

- ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

Բացակայում էր - ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին

(Մ.Ամիրյան)

1.1 Քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի **10.01.2020թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն **1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չեն ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

08.01.2020թ-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ հրավերի պայմաններին, մասնավորապես.

Հրավերի 65-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է. «Էլեկտրոդը պետք է ունենա 90 աստիճան անկյան տակ գտնվող 4.0 մմ ից ոչ ավելի կողային աշխատանքային մակերես, որը առավելագույնի կհասցնի հյուսվածքների հետ հետադարձ կապը և **կհեշտացնի** դժվար հասանելի հյուսվածքների հեռացումը..»:

-«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կողմից 65-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է. «Էլեկտրոդը պետք է ունենա 90 աստիճան անկյան տակ գտնվող 4.0 մմ ից ոչ ավելի կողային աշխատանքային մակերես, որը առավելագույնի կհասցնի հյուսվածքների հետ հետադարձ կապը և դժվար հասանելի հյուսվածքների հեռացումը..», որը չի համապատասխանում հրավերի պայմաններին: Ներկայացված միտքը թերի է:

68-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է. «Ամբողջ երկարությամբ պետք է ունենա ակոս, որը բաժանված է երկու մասի՝ կորտիկալ եւ սպոնգիոզ հատվածների համար: Կորտիկալ հատվածի տրամագիծ 4.75մմ, **պրոքսիմալ հատվածում 3.9մմ ից ոչ ավել** եւ 3.5մմ ից ոչ պակաս դիստալ հատվածում: Երկարությունը ՝ 17.8մմ ից ոչ ավել, 17.6մմ ից ոչ պակաս»:

-«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չէ պրոքսիմալ հատվածի տրամագիծը:

Ինչպես նաև անհրաժեշտ էր հստակ ներկայացնել ապրանքների տեխնիկական բնութագիրը՝ բացառելով «Պետք է» արտահայտությունները:

-«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված էին.

1). կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ±0.01մմ,
3). կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ±0.01մմ,
6). կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ±0.01մմ,
7) կետով՝ Կորտիկալ պտուտակ-տրամագիծը կազմում է 3.5 -0.01մմ,
8) կետով՝ Արգելափակվող և կորտիկալ պտուտակների տրամագիծը կազմում է 3.5 ±0.01մմ, սպոնգիոզ պտուտակներինը 4,0±0.01մմ:

-«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում /Հավելված 3.1/ նշված մեծությունները չէին համապատասխանում հրավերով սահմանված մեծությունների թույլատրելի շեղումներին, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

-«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ կողմից ներկայացված Հավելված 3.1-ով սահմանված /առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ առաջարկվող ապրանքի անվանումը դաշտում բոլոր չափաբաժինների մասով նշվել են հրավերի /Հավելված N 1/ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի CPV անվանում դաշտում նշված տեղեկությունները:

Անհրաժեշտ էր վերոնշյալ այունկաներում լրացնել առաջարկվող ապրանքատեսակների անվանումները:

15.01.2020թ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Այսուհետև՝ Կարգ/ 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և գնումների համակարգողը ծանուցեց մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը **/16.01.2020թ.-20.01.2020թ./** շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

-«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունները շտկվել էին, բացառությամբ 8) կետով՝ սպոնգիոզ պտուտակների տրամագծի մեծությունը /4,0±0.01մմ/:

1.2 Համաձայն Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետև՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության՝ բացառությամբ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 45-րդ կետի համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

24.01.2020թ. Հաշվի առնելով վերոնշյալը և հիմք ընդունելով Կարգի 32-րդ, 45-րդ և 48-րդ կետերի և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ի կողմից 50-րդ չափաբաժնով ներկայացված հայտը մերժել և **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով մասնակցի տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացակարգի հրավերի 50-րդ չափաբաժնով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ **«Ար-Մեդիկա» ՍՊԸ**-ի, կողմից ներկայացված գնային առաջարկը **27.12.2019թ.**-ին տեղի ունեցած բանակցությունների ավարտից հետո գերազանցում են նշված չափաբաժնով նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ պարբերության պահանջները */բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած/* գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 50-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

1.3 **24.01.2020թ.** հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի /բացառությամբ 50-րդ չափաբաժնի/, «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ի և «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի** որակավորման չափորոշիչները գնահատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող, վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ */1-16, 21-26, 31, 33-49, 51-53, 66-67, 71-րդ չափաբաժինների մասով **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ն, 17-20-րդ չափաբաժինների մասով՝ **«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ**-ն, 54-65, 68-70-րդ չափաբաժինների մասով՝ **«Ար-Մեդիկա» ՍՊԸ**-ն/* և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան ընտրվված մասնակիցների հետ համապատասխան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու հաջոր աշխատանքային օրվա ժամը 17:10-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)		Ա.Նազարյան
Գնահատող		Վ.Վահանյան
Գնահատող		Հ.Ավետիսյան
Գնումները համակարգող		Մ.Ամիրյան